Պարոն/Տիկին Ա. Գ... *ին*
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ պարոն Գ. Բաղրամյանին

Խնդրում եմ փեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխափակազմի սփորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապափրասփել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիփություն

*Գ. Բաղրամյան*____________
«23» 06 *2023թ.*

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Հանձնաժողովի աշխատակցի անունը, ազգանունը՝**
   - Սերգեյ Աղինյան,
   - Լուսինե Հովհաննիսյան:
2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ,
   - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության սակագնային բաժնի գլխավոր մասնագետ:

3.Գործուղման վայրը և ժամկետները՝ Վիեննա, Ավստրիա, 2023թ թվականի հունիսի 18-20-ը:

4.Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝ Էներգետիկայի կարգավորողների եվրոպական խորհուրդ (CEER):

5.Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝ Մասնակցություն «ԵՄ արևելյան հարևանությամբ տարածաշրջանային էներգետիկ շուկայի ստեղծում՝ խթանելով մաքուր էներգիայի փոխակերպումը փոխկապակցված էներգիայի շուկայի միջոցով» թեմայով տարածաշրջանային համաժողովին:

6. Քննարկված թեմաները (հարցերը)՝ ԵՄ Արևելյան հարևանությամբ տարածաշրջանային էներգետիկ շուկայի ստեղծմանը նվիրված համաժողովը, որը կազմակերպվել էր Էներգետիկայի կարգավորողների եվրոպական խորհուրդի «ԵՄ-ն հանուն էներգետիկայի, Փուլ II» («EU4Energy Phase II») ծրագրի շրջանակներում, նպատակ ուներ նպաստել ինչպես ԵՄ-ից, այնպես էլ Արևելյան գործընկերության պետություններից համաժողովին մասնակցող երկրների ազգային կարգավորող մարմինների և համապատասխան նախարարությունների ներկայացուցիչների փորձի փոխանակմանը: Համաժողովն անդրադարձավ տարածաշրջանային շուկայի ձևավորման մոտեցումների մարտահրավերներին և հնարավորություններին՝ էլեկտրական էներգիայի սակագների աճի և վերականգնվող էներգիայի խթանման տեսանկյունից: Սպառողներին անվտանգ, կայուն և մատչելի էլեկտրական էներգիայի մատակարարման ապահովումը պահանջում է էներգետիկ շուկայի ինտեգրում՝ միջսահմանային առևտրի խոչընդոտները վերացնելու և ընդհանուր էներգետիկ շուկայի կանոնները պահպանելու միջոցով: Ինտեգրված տարածաշրջանային էներգետիկ շուկայի ստեղծումը կնվազեցնի ցանկացած երկրի էներգետիկ անկայունությունը և կախվածությունը, քանի որ մի երկրում արտադրված էլեկտրական էներգիան կարող է մատակարարվել մեկ այլ երկրի սպառողին: Ավելին, ինտեգրված տարածաշրջանային էներգետիկ շուկայի ստեղծումը կնպաստի երկրների վերականգնվող էներգետիկայի ներուժի լիարժեք օգտագործմանը, ինչը կհանգեցնի վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կիրառմամբ արտադրվող էլեկտրաէներգիայի մասնաբաժնի ավելացմանը էլեկտրաէներգիայի վերջնական սպառման մեջ:

Համաժողովը մասնակիցներին հնարավորություն ընձեռեց կարծիքներ փոխանակելու Հարավային Կովկասում տարածաշրջանային էներգետիկ շուկա ստեղծելու մարտահրավերների ու հեռանկարների, ինչպես նաև Եվրամիության և Էներգետիկ համայնքի էներգամատակարարման անվտանգության խնդիրների շուրջ:

Մասնավորապես, Էներգետիկ համայնքի քարտուղարության փոխտնօրեն Դիրկ Բուշլը խոսեց տարածաշրջանային էներգետիկ շուկայի ստեղծման իրավական հիմքերի և կարգավորման պահանջների մասին, Միջազգային էներգետիկ գործակալության ներկայացուցիչը ներկայացրեց եվրոպական էլեկտրաէներգետիկական շուկայի զարգացումները և ոլորտում վարվող քաղաքականության միտումները, Ավստրիայի

կարգավորող մարմնի գործադիր տնօրեն Վոլֆգանգ Ուրբանտշիչը, ով նաև Էներգետիկայի կարգավորողների եվրոպական խորհուրդի փոխնախագահն է, իր ելույթում ընդգծեց Արևելյան Հարևանությունում տարածաշրջանային շուկայի ստեղծման կարևորությունը, վերականգնվող էներգիայի զարգացումը և միջպետական առևտրի խթանումը:

7.Հանդիպումները, ելույթները՝

EU4Energy և CEER ներկայացուցիչ Զվիադ Գաչեչիլաձեն հանդես եկավ ելույթով՝ ներկայացնելով Հարավային Կովկասում էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման ուղղությամբ Հայաստանում և Վրաստանում իրականացված քայլերը: Հաջորդիվ, կազմակերպվեց պանելային քննարկում Հարավային Կովկասում տարածաշրջանային շուկայի մարտահրավերների և հեռանկարների վերաբերյալ, որին որպես խոսնակ մասնակցեց և ելույթով հանդես եկավ հանձնաժողովի անդամ Սերգեյ Աղինյանը: Վերջինս ներկայացրեց Հայաստանում էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման և շուկայի նոր՝ մրցակցային մոդելի ներդրման ուղղությամբ կատարված քայլերը, շուկայի ազատական մոդելի կիրառման արդյունքում տեսանելի ձեռքբերումները, մասնավորապես՝ միջպետական առևտրի ծավալների աճը, նոր մասնակիցների մուտքը շուկա, սպառման և արտադրության հատվածում առավել օպտիմալ պլանավորումը, հասցեական պատասխանատվության կիրառումը, էլեկտրական էներգիայի ամբողջապես թվայնացված առևտուրը:

Հաջորդ պանելային քննարկումը «Մոլդովայի և Ուկրաինայի ինտեգրումը ԵՄ էլեկտրաէներգետիկական ներքին շուկա» թեմայով էր, որին բացի համապատասխան երկրների ներկայացուցիչներից ելույթով հանդես եկավ նաև Էներգետիկ համայնքի քարտուղարության էլեկտրաէներգիայի ստորաբաժանման ղեկավար Ժասմինա Թրուլժը:

Չնայած այն հանգամանքին, որ ցանցերի սինխրոնացումը տեխնիկապես դժվար է և պահանջում է էլեկտրաէներգիայի համակարգերի զգալի ճշգրտումներ, այնուամենայնիվ, աշխարհաքաղաքական վերջին զարգացումները հնարավորություն տվեցին Ուկրաինայի և Մոլդովայի համակարգերը սինխրոնացնել մայրցամաքային եվրոպական էներգահամակարգի հետ, որին կհաջորդի ուկրաինական և մոլդովական էլեկտրաէներգետիկական շուկայի փոխկապակցումը եվրոպական

էլեկտրաէներգետիկական ներքին շուկայի հետ: Քննարկվեցին ԵՄ-ի և Ուկրաինայի ու Մոլդովայի միջև շուկայական ինտեգրման մարտահրավերներն ու հնարավորությունները:

Համաժողովի վերջում քննարկվեցին ոլորտում իրականացվող քաղաքականության միտումները և եվրոպական էլեկտրաէներգետիկական շուկայի զարգացումները, ինչպես նաև թե ինչպես կարող է վերափոխվել ԵՄ էլեկտրաէներգետիկական շուկան և ինչ ազդեցություններ այն կարող է ունենալ հարևանության երկրների համար:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Հաշվի առնելով տարածաշրջանային էներգետիկ շուկաների զարգացումների վերաբերյալ համաժողովին հնչած ելույթների և քննարկումների արդյունքները՝

✓ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և Վրաստանի կարգավորող մարմնի (GNERC) միջև կնքված փոխըմբռնման հուշագրի շրջանակում ակտիվ համագործակցել համընդհանուր խնդիրների համար լուծումներ գտնելու ուղղությամբ,

✓ Վրաստանի կարգավորող մարմնի հետ համագործակցության շրջանակներում ուսումնասիրել ԵՄ գործիքների (TWINING, TAIEX, SYGMA) օգտագործմամբ էլեկտրաէներգետիկական տարածաշրջանային շուկաների փոխկապակցման հնարավորությունը,

✓ Առաջիկայում դիտարկել Վրաստանի կարգավորող մարմնի հետ համատեղ հանդիպում կազմակերպելու հնարավորությունը՝ շուկաների փոխկապակցմանն և միջպետական առևտրի խթանմանն առնչվող օրակարգով:

Գործուղվող ---------- 23.06.2023թ. ***Ս. Աղինյան***

(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 23.06.2023թ. ***L. Հովհաննիսյան***

(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ.

սեպտեմբերի 19-ի N 1230-Ն

որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՁՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը Հրաման 432-ՀՆ, 431-ԳՔ

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

Գարեգին Բաղրամյան, ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի նախագահ

Սերգեյ Աղինյան, ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի անդամ

Լուսինե Հովհաննիսյան, հանձնաժողովի սակագն. քաղաքական. վարչ.,սակագն. բաժնի գլխ. մասնագետ

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը՝ ՎԻԵՆՆԱ /ԱՎՍՏՐԻԱ/

5. Գործուղման ժամկետները՝ 18.06.2023-20.06.2023թթ.

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջե

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝գիշերավարձ, ճանապահածախս

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝ օրապահիկ

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի

Ծախսի տեսակը		*Գարեգին Բաղրամյան*	*Սերգեյ Աղինյան*	*Լուսինե Հովհաննիսյան*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)				
	Ավիատոմսի արժեքը (դրամ)				
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)				
	Վճարը 1 օրվա համար (դրամ)				
	Օրերի քանակը				
	Ընդամենը (դրամ)				
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝ եվրո)	141	141	141	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	58,443.09	58,443.09	58,443.09	
	Օրերի քանակը	3	3	3	
	Ընդամենը (դրամ)	175,329	175,329	175,329	525.99
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար				
	Մուտքի արտոնագրի վճար				
	Այլ ծախսեր (*նկարագրել*)				
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		175.33	175.33	175.33	525.99

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

ամսաթիվը: 21.06.2023թ.